Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ -ի

EduArmenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպես ներառել դասապրոցեսի մեջ գերակտիվ և բարդ դաստիարակվող երեխաներին

Հետազոտող ուսուցիչ՝ Նաիրա Նազարյան
Դպրոց Նիկոլ Աղբալյանի անվան հ.19 դպրոց

Երյան 2022

Բովանդակություն

1.Ներածություն……3

2.Գլուխ 1……..

……4

3.Գլուխ 2……

……6

4.Եզրակացություն……

……14

5.Գրականության ցանկ…….

……..15

Ներածություն
Հետազոտող ուսուցիչ

Ես Նաիրա Նազարյանն եմ:Աշխատում եմ Նիկոլ Աղբալյանի անվան հ.19 դպրոցում: Դասավանդում եմ կերպարվեստ առարկան: Ունեմ 24 տարվա մանկավարժական փորձ: Այդ տարիների ընթացքում բախվել եմ շատ խնդիրների: Հետազոտել եմ իմ ունեցած խնդիրները, փորձել եմ վերլուծել, գտնել սխալները և դրանց լուծման ճանապարհները, մեթոդները, որոնք աստիճանաբար արդյունքի են բերել:

Սկզբից եղել են դասապրոցեսի հետ կապված դժվարություններ: Իհարկե, փորձի պակասը սկզբնական շրջանում բարդացնում էր դասի լիարժեք արդյունավետ անցկացումը:

Աշխատելով, փորձելով, կիրառելով մեթոդներ՝ կամաց-կամաց գտա ելքը: Նաև նպաստեց այն, որ շատ կարդում էի տարբեր մեթոդիստների ձեռնարկներ, որոնցից էլ օգտվում էի: Այժմ ունեմ բավականին փորձ ու հեշտ եմ հաղթահարում ցանկացած մարտահրավեր:

Ամեն մի նոր սերունդ բերում է իր հետ նոր մոտեցումներ, և մենք էլ նոր մեթոդներ պետք է կիրառենք, որ արդյունավետ լինի աճող սերնդի դաստիարակությունը և կրթությունը:

Հետազոտող ուսուցիչը պետք է լինի ստեղծագործող և նոր մեթոդներ կիրառող, որը ստանում է լիարժեք դրական վերջնարդյունք:

Իմ հետազոտության թեմայի խնդիրն է, ինչպես ներառել գերակտիվ երեխաներին դասապրոցեսի մեջ:Ինչ մեթոդներ կիրառել,որոնք թույլ կտան պարզելու իրավիճակը:

Խնդրի ակնկալվող լուծումը կլինի դասապրոցեսին լիարժեք մասնակից դարձնել գերակտիվ երեխաներին:

Գլուխ 1

Ուսուցիչը պետք է ունենա մի քանի չափանիշ՝ արդյունավետ դասավանդում իրականացնելու համար.

- Առարկայի իմացություն
- Դասավանդման պրակտիկա
- Ինքնազարգացում
- Ունակ լինի աջակցել աշակերտին
- Կարողանա զննել, ուսումնասիրել

Արտադասարանական մեթոդների կիրառումը թույլ է տալիս պարզելու, թե ինչ խնդիրներ կան և որ մեթոդը կիրառել տվյալ իրավիճակում: Կան գործոններ, որոնք խոչընդոտում են դասավանդման արդյունավետություն բարձրացմանը: Օրինակ՝

- Եթե կա կարգապահական խնդիր
- Եթե չկա ուսուցիչ – աշակերտ - ծնող կապը
- Եթե դասարանում չկա թեկուզ և մեկ չինտեգրված աշակերտ
- Բարդ դաստիարակվող երեխաներ
- Բուլինգի դեպքեր

Դասավանդման պրոցեսում ինձ համար լարված իրավիճակ են ստեղծում գերակտիվ և բարդ դաստարակվող երեխաները, որոնք խոչընդոտում են դասավանդման արդյունավետության բարձրացմանը:

Ես ինձ համար գտել եմ մեթոդներ լուծելու այդ խնդիրները, որով և ուզում եմ կիսվել: Իհարկե, ինձ օգնել է իմ տարիների փորձը և մասնագիտական գրականությունը:

Նպատակ և խնդիրներ:Դժվար դաստիարակվող և բարդ խնդիրներ ունեցող սաների հետ աշխատելը ունի հետևողական շատ բարդ ճանապարհ:Պետք է ցուցաբերել անհատական, տարբերակվող մոտեցում, և այդ գործընթացը մեկ օրում լուծվող հարց չէ:

Ինչ մեթոդներ պետք է կիրառել բարդ և դժվար դաստարակվող երեխաների համար,որպեսզի հեշտ ներգրավվեն դասապրոցեսին և չխանգարեն մյուս աշակերտներին.

- ✓ Մոտիվացիա

- ✓ Աշխարհայացք
- ✓ Ստեղծագործական աշխատանք

Աշակերտներ կան,որոնք սիրում են ազատ քայլել դասապրոցեսի ժամանակ,խոսել,վերցնել ուրիշի իրերը,խանգարել դասը:

Խորհրդակցելով փորձառու ուսուցիչների հետ՝հասկացա,որ կան մեթոդներ,որոնք շատ արդյունավետ են:

Քայլեր:

- ❖ Երեխայի հետ պետք է խոսել հարգանքով, լինել նրբանկատ, չվիրավորել անձը և արժանապատվությունը,ինքնասիրությունը:
- ❖ Ձևավորել ներողամտություն,հանդուրժողականություն
- ❖ Որոշ դեպքերում ընդունել աշակերտի տեսակետը
- ❖ Աջակցել, քաջալերել,քննարկել,թե ինչպես կարելի է խուսափել կոնֆլիկտներից:

Երեխաներն ուշադիր են և ակտիվ, երբ նրանց հետ խոսում են անկանխատեսելի հնարքների լեզվով ու դիպուկ,վառվռուն հարցերով,այսինքն՝խոսել արվեստի լեզվով: Հետևաբար պետք է կիրառել հնարքներ քննարկվող առարկան ճիշտ լուսաբանելու համար:

Այս հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել և գտնել ուսուցման պրոցեսում հանդիպած դժվարությունները,գտնել լուծումները, մեթոդները և բարելավել իմ և աշակերտների կարողականությունը և վերջնարդյունքը:

Խնդրի լուծումը կլինի գերակտիվ երեխայի լիարժեք ներգրավվածությունը դասապրոցեսում:

Գլուխ 2

21-րդ դարի դպրոցներում պետք է կիրառել դաստիարակության նոր մեթոդներ: Բարձրացնել ուսուցչի դերը և գործունեությունը: Այլ կերպ ասած՝ ուսուցչի դերի վերածնունդ:

Հասարակական կյանքի բարդ ցնցումները՝ բնական աղետները, պատերազմները և ընտանեկան խնդիրները նոր տեսակի շեղումներ են ի հայտ բերում ինչպես վարքի, ագրեսիվության, այնպես էլ գերակտիվության,որը դարձել է իմ հետազոտության առարկան:

Մենք՝ ուսուցիչներս շփվում ենք տարբեր երեխաների հետ կյանքի ամենալավ, լուսավոր, կարևոր ժամանակահատվածի հետ, որի անունն է մանկություն: Այս ժամանակաշրջանում է, որ անձը ձևավորվում է որպես անհատ, որը հետագայում ունենում է ձեռքբերումներ կամ,ցավոք սրտի անհաջողություններ ,սխալ հասկացված լինելուց երեխաներ կան, որոնք բարդույթավորվում, պարփակվում են իրենց կաղապարի մեջ: Սոցիալական վիճակից կաշկանդվում, միգուցե նաև ագրեսիվանում, չարանում աշխարհի հանդեպ: Ուսուցչների առաքելությունն է ուսումնասիրել,ճանաչել յուրաքանչյուր երեխայի, ամեն օր բացահայտել նորովի: Երեխային թույլ տալ ինքնադրսևորվել, սովորեցնել մտածել, եզրահանգումներ անել,բանավիճել և ստեղծագործել: Ձևավորել երեխայի մոտ ճիշտ արժեհամակարգ:

Դաստիարակությունը կրթության նկատմամբ առավելություն ունի,մարդուն դաստիարակությունն է կերտում:(Անտուան դը Սենտ-Էքզյուպերի):

Գերակտիվ երեխաները կարծես ‘էներգիայի կծիկ’ լինեն, նրանց դժվար է նստեցնել 45 րոպե անշարժ: Դասաժամի 45 րոպեն չափազանց ձանձրացնում է այդ տեսակի երեխաներին:Այդ դեպքում արագ փոխել է պետք իրավիճակը:Զգացական դաշտի վրա ազդելով՝արդյունքում կունենանք վարքի մեջ,որն էլ կնպաստի ուշադրության կենտրոնացման:

Օրինակ՝ դասի ժամանակ կարող եմ թույլ տալ, որ կանգնած նկարի, շարժվի, մոտենա գրատախտակին, հարցերիս պատասխանի կամ իմ առաջադրանքի էսքիզը կատարի գրատախտակի վրա: Մոտենա ընկերոջը օգնելու նպատակով:

Կարելի է գերակտիվ երեխային դարձնել ուսուցչի օգնական, որը դասապրոցեսում կօգնի բաժանել օրինակ՝ քարտերը, որտեղ նկարիչների ստեղծագործությունների

վերատպություններ են և առաջինը հենց իրեն հանձնարարել արվեստի տետրում գրել մեկնաբանություն տվյալ նկարչի ստեղծագործության մասին և հանձնարարել տանը արտանկարել տվյալ ստեղծագործությունը:

Հույս ունենալ, որ կարճ ժամանակում աշակերտը կդառնա լսող,հանգիստ ու հավասարակշռված, դժվար է պատկերացնել: Պետք է միշտ կապ պահել ծնողի, հոգեբանի, նյարդաբանի հետ: Մեր իրականության մեջ շատ դժվար է այս կապը պահել: Բայց հնարավորինս պետք է փորձենք ու փոխենք մեր մտածելակերպը:

Ես երեխայի գերակտիվության խնդիրները չեմ քննարկում մյուս ծնողների ներկայությամբ: Խոսում եմ առանձին ծնողի հետ երեխայի բացթողումների և փոքրիկ ձեռքբերումների մասին: Պետք է փոքրիկ քայլերով ներառել երեխային դասապրոցեսի մեջ:

Վերևում պատկերված նկարը հայտնի ռուս նկարիչ Ֆեոդոր Ռեշետնիկովի 《Նորից երկուս》 կտավն է, որտեղ պատկերված է մի իրավիճակ, որը հաճախ է հանդիպում մեր իրականության մեջ:

Գերակտիվ երեխաներին չի կարելի խիստ պատժել: Նրանց հետ պետք է խոսել հանգիստ,վատ արարքից հետո պետք է անցնի որոշակի ժամանակ, որպեսզի նա հանդարտվի,էմոցիաները հանգստանան, ապա նոր պետք է պարզաբանել տվյալ արարքը:

Ես ունեմ աշակերտներ, որոնց հետ բարդ է աշխատել: Ամեն մեկը յուրովի գերակտիվ է: Պահանջվում է անհատական տարբերակված մոտեցում: Ես գտնում եմ տարբեր ճանապարհներ այն հարթելու համար:

Օրինակ՝ունեմ 6-րդ դասարանում սովորող վառվռուն, չարաճճի աչքերով մի աշակերտ:Նա չափազանց գերակտիվ երեխա է:Անցյալ ուստարվա առաջին կիսամյակում դժվար դաստիարակվող երեխաների շարքում էր:Առարկայական ուսուցիչները բողոքում էին և մեթոդներ փնտրում, որպեսզի կառավարելի դարձնեն այդ ‘Էներգիայի կծիկին’: Երկար,տքնաջան աշխատանք էր սպասվում: Կերպարվեստ առարկան ինքնին տալիս է հնարավորություն շատ մեթոդներ կիրառելու:

Մեր ‘Էներգիայի կծիկը’ սկզբից չէր կարողանում հանգիստ նստել: Անընդհատ ուզում էր դուրս գալ:Բացատրել նրան,որ չի կարելի այդքան դուրս գալ, ապարդյուն էր:Քանի որ շաբաթական մեկ անգամ էր կերպարվեստի դասաժամը,ես ունեի ժամանակ մեթոդներ մտածելու:Խոսեցի դասղեկի ,ծնողի հետ, բայց արդյունքը չէր երևում:

Մի անգամ հերթական դասին պատրաստված մտա ներս՝ձեռքիս յուղամատիտների մի մեծ տուփ:Որոշել էի նրան ալտերնատիվ տարբերակով գերել:Այդ օրը անցնում էինք Սարյանի նատյուրմորտները:

Ձեռքիս տեսնելով գունեղ յուղամատիտները,վազելով մոտեցավ ու ասաց,որ փոքր ժամանակ շատ է սիրել այդ նյութերով նկարել:Ես ուրախացա,այդ օրը սկսեցինք նրա հետ քննարկել,միասին վարել դասը,նրան տվեցի A3 ֆորմատի թուղթ և յուղամատիտները:Նա,տեսնելով մեծ ֆորմատի թուղթը,ավելի ոգևորվեց ու ամբողջ դասն անցավ իր համար հետաքրքիր և արդյունավետ:Երեխաներն ուրախացել էին,որ մեր 'Էներգիայի կծիկը' ներգրավվել է դասին ու չի խանգարում մյուսներին:

Շատ կարևոր է լսել երեխային առանց քննադատելու:Լինել ազնիվ և օգտակար երեխայի համար:Ունենալ հստակ կանոններ և ակնկալիքներ:Աջակցել ,քննարկել,թե ինչպես կարող են խուսափել հետագա բարդություններից:

Ես կազմել եմ գերակտիվ երեխաների համար նախատեսված աշխատանքային պլան:

1.ՑՈՒՑԱԴՐԵԼ ԴԱՍԱՐԱՆԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Խուսափել վերացական ակնկալիքներից:
Տրամադրել տեսողական հիշեցումներ (պլակատ,հիշեցման գունավոր թերթիկներ)
Ուսուցիչը պետք է օգտագործի կանոնների կամ դասի ակնկալիքների տեսողական և բանալի հիշեցումներ:

2. ԱՐՏՈՆՅԱԼ ՆՍՏԱՏԵՂԵՐ

Գերակտիվ երեխան պետք է լինի ուսուցչին մոտ և դրական ,օրինակելի աշակերտի կողքին,որտեղ ուշադրությունը քիչ է շեղվում:

3.ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երբ խոսում եմ գերակտիվ երեխայի հետ,աշխատում եմ գտնվել նրա կողքին ,բռնացնել նրա հայացքը,նստել շատ մոտ,որպես ավագ ընկեր:Միասին կրկնել այն հրահանգները,որոնք տվյալ պահին անհրաժեշտ են:

4.ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Լրացուցիչ ժամանակ տրամադրել առաջադրանքները կատարելու համար:Օգտագործել առաջադրանքների կատարման տարբեր մեթոդներ:

5.ԱՌՕՐՅԱ ՌԵԺԻՄՆԵՐ

Փորձել պահպանել կանոնները ամենօրյա ռեժիմով:Որոնք խթանելու են երեխայի մեջ ձևավորել նոր արժեքներ:Վերաձևավորել ու վերասովորեցնել վարքի ակնկալիքները:Ձևավորել լավ սովորություններ:

6.ԽՈՌՈՎՈՒԹՅՈՒՆ

Երեխան պետք է կարողանա արտահայտել իր տեսակետը , բայց նաև այն չպիտի խանգարի դասապրոցեսին:Թույլ չտալ խաղալ դասի ժամանակ կամ ստեղծել որևէ վտանգավոր և անպատշաճ իրավիճակ:

7.ԴՐԱԿԱՆ ԳՈՎԱՍԱՆՔ

Երեխային տալ հնարավորինս շատ դրական իմպուլսներ:Նույնիսկ երբ շատ աննշան է այդ դրականը՝պետք է խրախուսել:Երեխայի վարքագիծը կփոխվի ,եթե նա զգում է ,որ ուսուցիչը իրեն ճանաչում է,զգում է,ապրումակցում է:

Կարին Արմենի《Դիմակայունություն և սոցիալական հուզական ուսումնառություն》գրքում շատ լավ երևում է ժամանակակից ուսուցչի կերպարը,որը պետք է լինի ներող,հանդուրժող,խրախուսող,գիտելիք հաղորդող և ուղղորդող :Զգա մանուկի տվյալ դժվարությունը և իհարկե ապրումակցի(Empathy):

Կարողանա ճիշտ պահին պատասխանատու որոշում կայացնի:Բարեկրթորեն հարթի հակասությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իմ հետազոտական աշխատանքի նպատակն էր բացահայտել և գտնել իմ ուսուցման պրոցեսում առկա դժվարությունները,գտնել լուծումներ, մեթոդներ,որոնք բարելավելու են իմ և աշակերտների կարողականությունը և վերջնարդյունքը:

Իմ հետազոտման գերխնդիրն էր համարվում գերակտիվ և բարդ դաստիարակվող երեխաների ներառումը դասապրոցեսում:

Փորձելով և հետազոտելով երեխաների վարքը,գտա բազմաբնույթ լուծումներ՝բանավոր հաղորդակցում,ապրումակցում,ցանկացած մեթոդի կիրառում,որը սովորեցնում է երեխային ինչպես սովորել:Լսել երեխայի կարծիքը:Ճանաչել և զգալ յուրաքանչյուր երեխայի ներաշխարհը:

《Երբ գիտակցենք երկրի վրա մեր դերը,թեկուզև՝ամենահամեստն ու աննկատը,միայն այդ դեպքում երջանիկ կլինեն》:

Անտուան դը Սենտ Էքզյուպերի

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Անտուան դը Սենտ-Էքզյուպերի"Փոքրիկ Իշխանը"Էդիթ Պրինտ 2015թ.

Հովհաննիսյան Ա.Վ."Դժվար դաստիարակվող երեխաների ինքնահաստատման մանկավարժական ուղիները"Վանաձոր 2013թ.

2. Ղ.Աղայանը մանկավարժ,Հայպետհրատ,Երևան 1941թ.

Կարին Արմեն "Դիմակայունություն և սոցիալական հուզական ուսումնառություն"2022թ.

3. Василькова Ю.В. Социальная педагогика,2008г.